| Լծեն                 | 11          | 30               | 65             | 10          | 0           | 158        | 0               | 4         | 136          |
| Հացավան              | 42          | 233              | 0              | 13          | 0           | 424        | 0               | 0         | 235          |
| Իշխանասար            | 54          | 204              | 728            | 107         | 30          | 603        | 85              | 10        | 136          |
| Մուցք                | 49          | 374              | 1130           | 128         | 11          | 605        | 15              | 15        | 312          |
| Նժդեհ                | 20          | 362              | 210            | 13          | 30          | 36         | 25              | 28        | 194          |
| Նորավան              | 94          | 357              | 744            | 22          | 2           | 706        | 81              | 19        | 207          |
| Շաքի                 | 242         | 1249             | 2193           | 579         | 8           | 2814       | 149             | 38        | 677          |
| Շաղատ                | 268         | 1050             | 961            | 191         | 3           | 502        | 0               | 14        | 1060         |
| Շենաթաղ              | 72          | 644              | 493            | 0           | 334         | 270        | 0               | 71        | 431          |

|                 |             |              |              |             |            |              |             |            |              |
|-----------------|-------------|--------------|--------------|-------------|------------|--------------|-------------|------------|--------------|
| Որոտան          | 70          | 214          | 247          | 13          | 13         | 476          | 42          | 16         | 340          |
| Սալվարդ         | 52          | 292          | 1370         | 11          | 0          | 302          | 94          | 24         | 558          |
| Վաղատին         | 130         | 163          | 1324         | 37          | 24         | 705          | 0           | 6          | 516          |
| Տոլորս          | 108         | 139          | 878          | 23          | 30         | 861          | 37          | 16         | 59           |
| Տորունիք        | 22          | 140          | 135          | 0           | 0          | 58           | 50          | 4          | 175          |
| Ույծ            | 90          | 267          | 920          | 66          | 0          | 755          | 94          | 3          | 344          |
| Գորայք          | 104         | 575          | 416          | 30          | 0          | 260          | 6           | 10         | 120          |
| Սառնակունք      | 114         | 772          | 742          | 87          | 0          | 653          | 0           | 13         | 220          |
| Ծղուկ           | 80          | 998          | 532          | 124         | 0          | 700          | 30          | 12         | 11           |
| Սպանդարյան      | 70          | 451          | 1265         | 23          | 0          | 699          | 11          | 10         | 575          |
| Դաստակերտ       | 43          | 103          | 107          | 107         | 4          | 70           | 0           | 14         | 365          |
| Ք.Սիսիան        | 152         | 628          | 654          | 654         | 49         | 2114         | 650         | 15         | 3704         |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> | <b>3540</b> | <b>14875</b> | <b>24194</b> | <b>2736</b> | <b>732</b> | <b>23460</b> | <b>2133</b> | <b>583</b> | <b>14040</b> |


Աղյուսակ 7. Սիսիան համայնքի գյուղատնտեսական արտադրանքները և ծավալները ըստ բնակավայրերի, 2022թ.

| h/h | Համայնքի և բնակավայրի անվանումը | Հացահատիկ Հատիկընդեղեն |              | Բանջարա բոստանային մշակաբույսեր |                | Կարտոֆիլ  |              | Պտուղ, հատապտուղ |               | Կերայի և արմատա պտուղ | Բազմամյա և միամյա խոտ |
|-----|---------------------------------|------------------------|--------------|---------------------------------|----------------|-----------|--------------|------------------|---------------|-----------------------|-----------------------|
|     |                                 | հա                     | ցենտ         | հա                              | ցենտ           | հա        | ցենտ         | հա               | ցենտ          | ցենտ                  | ցենտ                  |
| 1   | Սիսիան                          | 381                    | 4587         | --                              | 917            | --        | 3335         | --               | 346           | 0                     | 4350                  |
| 2   | Ախլաթյան                        | 85.4                   | 1150         | --                              | 110            | --        | 250          | --               | 118           | 0                     | 4600                  |
| 3   | Աղիտու                          | 512                    | 11571        | --                              | 348            | --        | 1060         | --               | 216           | 0                     | 2000                  |
| 4   | Անգեղակոթ                       | 394                    | 9688         | --                              | 451            | --        | 2855         | --               | 228           | 0                     | 11800                 |
| 5   | Աշոտավան                        | 61                     | 1012         | --                              | 1012           | --        | 2410         | --               | 655           | 0                     | 4700                  |
| 6   | Արևիս                           | 0.15                   | 3            | --                              | 11.2           | --        | 80           | --               | 8             | 0                     | 2400                  |
| 7   | Բալաթ                           | 68.2                   | 1614         | --                              | 58             | --        | 471          | --               | 110           | 0                     | 3700                  |
| 8   | Բնունիս                         | 93                     | 1506         | --                              | 73             | --        | 60           | --               | 169           | 0                     | 6000                  |
| 9   | Բոնակոթ                         | 485                    | 7384         | --                              | 3205           | --        | 9265         | --               | 671           | 110                   | 15835                 |
| 10  | Գետաթաղ                         | 8.6                    | 116          | --                              | 207            | --        | 230          | --               | 154           | 0                     | 2000                  |
| 11  | Դաստակերտ                       | 0.8                    | 9            | --                              | 85             | --        | 324          | --               | 49            | 0                     | 2600                  |
| 12  | Դարբաս                          | 164                    | 3892         | --                              | 2636           | --        | 2482         | --               | 2564          | 0                     | 5390                  |
| 13  | Թանահատ                         | 16.03                  | 232          | --                              | 21             | --        | 232          | --               | 4.5           | 0                     | 500                   |
| 14  | Թասիկ                           | 31.96                  | 654          | --                              | 974            | --        | 1351         | --               | 181           | 0                     | 10000                 |
| 15  | Իշխանասար                       | 400                    | 3888         | --                              | 61.5           | --        | 307          | --               | 47            | 0                     | 3120                  |
| 16  | Լծեն                            | 143                    | 5603         | --                              | 3              | --        | 20           | --               | 82            | 0                     | 360                   |
| 17  | Լոր                             | 1.8                    | 27           | --                              | 164            | --        | 1044         | --               | 79            | 0                     | 4000                  |
| 18  | Հացավան                         | 109                    | 1703         | --                              | 335            | --        | 700          | --               | 282           | 40                    | 2000                  |
| 19  | Մուցթ                           | 64                     | 1253         | --                              | 123            | --        | 655          | --               | 37            | 0                     | 5000                  |
| 20  | Նժդեհ                           | 6.28                   | 64           | --                              | 39             | --        | 147          | --               | 47            | 0                     | 9400                  |
| 21  | Նորավան                         | 336                    | 6640         | --                              | 204            | --        | 754          | --               | 163           | 0                     | 5100                  |
| 22  | Շաղատ                           | 132                    | 2077         | --                              | 719            | --        | 1250         | --               | 127           | 0                     | 5800                  |
| 23  | Շաքի                            | 430                    | 9024         | --                              | 395            | --        | 6155         | --               | 320           | 0                     | 8060                  |
| 24  | Շենաթաղ                         | 1                      | 10           | --                              | 166            | --        | 1350         | --               | 92            | 0                     | 8500                  |
| 25  | Որոտան                          | 91                     | 1542         | --                              | 120            | --        | 335          | --               | 167           | 0                     | 1650                  |
| 26  | Ույծ                            | 284                    | 353          | --                              | 1015           | --        | 1000         | --               | 385           | 0                     | 1250                  |
| 27  | Սալվարդ                         | 76.2                   | 1129         | --                              | 217            | --        | 627          | --               | 50            | 0                     | 7600                  |
| 28  | Վաղատին                         | 377                    | 4888         | --                              | 211            | --        | 745          | --               | 302           | 0                     | 1600                  |
| 29  | Տոլորս                          | 172                    | 2208         | --                              | 321            | --        | 545          | --               | 114           | 0                     | 7060                  |
| 30  | Տորունիթ                        | 8.14                   | 133          | --                              | 114            | --        | 517          | --               | 47            | 0                     | 950                   |
| 31  | Շամբ                            | 107                    | 2515         | --                              | 1408           | --        | 600          | --               | 884           | 0                     | 3010                  |
| 32  | Գորայթ                          | 475                    | 488          | --                              | 5694           | --        | 1859         | --               | 1             | 0                     | 9000                  |
| 33  | Ծղուկ                           | 50.7                   | 608          | --                              | 149            | --        | 418          | --               | 6             | 0                     | 7000                  |
| 34  | Սառնակունք                      | 135                    | 1612         | --                              | 117            | --        | 640          | --               | 11            | 0                     | 9000                  |
| 35  | Սպանդարյան                      | 95                     | 1152         | --                              | 133            | --        | 348          | --               | 25            | 0                     | 6000                  |
|     | <b>Ընդամենը</b>                 | <b>579526</b>          | <b>90335</b> | <b>--</b>                       | <b>21816.7</b> | <b>--</b> | <b>44421</b> | <b>--</b>        | <b>8741.5</b> | <b>150</b>            | <b>181335</b>         |

## **Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ**

Սիսիան համայնքը իր 36 բնակավայրերով ամենահարուստն է պատմամշակութային, բնական հուշարձաններով, տեսարժան վայրերով, զբոսաշրջային ոլորտի հետաքրքրություն ներկայացնող բնակլիմայական և տարածական պայմաններով: Համայնքը հարուստ է հանքային տաք և սառը աղբյուրներով, բնական մեծ և փոքր ջրվեժներով, լճակներով, քարակարկառներով, քարացրոններով, միաձույլ ամբողջական կերտվածքով ժայռերով, ալպիական մարգագետիններով: Համայնքը հատկապես աչքի է ընկնում մ.թ.ա. V-II հազարամյակների էնեոլիթյան և մեգալիթյան կիկլոպյան ամրոցներով, ժայռապատկերներով (V –IV), Զորաց Քարերի(III-I) աստղադիտարանով և հնագույն քաղաքակրթության կացարան-բնակավայրերով: Սիսիան համայնքը հանդիսանում է Ուրարտական պետության ամենամեծ գտածո արժեքավոր իրերի, դամբարանադաշտերի, գիտական բացահայտումների տարածաշրջանը: Սիսիան համայնքի Դարբաս, Վաղատին, Լծեն, Սիսիան, Գորայք բնակավայրերի տարածքով են անցնում Մեծ մետաքսի ճանապարհի չվնասված, պահպանված քարավանային ուղիները: Սիսիանի 11 բերդերը վկայում են մեր դիրքը և կարևորությունը հայոց պետականության պատմական քառուղիներում հատկապես հին միջնադարյան Սյունյաց իշխանների տեղն ու ազդեցությունը ողջ տարածաշրջանում : Սիսիանում են գտնվում յուրահատուկ ճարտարապետական, պատմական, հավատալիքային և հոգևոր նշանակություն ունեցող այնպիսի կառույցներ, ինչպիսիք են Թանահատի վանքը(V-VI), Աղիտուի մահարձան-հաղթականարը (VII դար), Սիսիանի սբ. Գրիգոր Լուսավորիչ (սբ. Հովհաննես) եկեղեցին (Սյունի վանք, VII դար), Որոտնավանքը(X-XI), Պորտաքարը(հեթանոսական շրջան), լքված կամ ավերված բերդաքաղաք կամ քաղաքատիպ բնակավայրերը: Սիսիանը ունի պատմության թանգարան իր քարադարանով, կերպարվեստի պատկերասրահ և հատակագծային զուգաչափ հրապարակ իր պատմական կենտրոնով: Սիսիանի բնակավայրերից շատերը ունեն նախապատմական ծագում և անընդմեջ ապրելու տևողություն, որտեղ նկատվում են պատմական գրեթե բոլոր ժամանակաշրջանների վկայությունները: Այնպիսի բնակավայրեր ինչպիսիք են Լորը,Գետաթաղը, Դարբասը, Որոտնավանը, Սալվարդը, Ախլաթյանը, Նժդեհը, Սառնակունքը, Աղիտուն, Վաղատին, Լծենը կարող են հավակնել դառնալու ինչպես էթնո-պատմական զբոսաշրջության այցելության վայրեր, այնպես էլ առողջարանային հանգստի փոքրիկ կենտրոններ՝ իրենց ազգագրական, ավանդական, խոհանոցային ուրույն առաջարկություններով: Սիսիանը ունի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները, բնական ռեսուրսները, էկոլոգիապես մաքուր սննդի արտադրության հնարավորությունները, անվտանգային միջավայրը և բնակչության պատրաստակամությունն ու բարյացկամությունը՝ ընդունելու ներգնա բոլոր զբոսաշրջիկների: Իրականացվող զբոսաշրջային և ժամանցային ծրագրերից են ամենամյա հայ-իրանական խոհանոցային, ազնվամորու փառատոները, տարբեր համերգային ելույթները, մրցույթները: Կազմակերպվող շարքից են տեղի նկարիչ-քանդակագործների ցուցահանդես-վաճառքները, թեմատիկ ցուցադրությունները: Լայն թափ է ստացել հյուրատնային և ծառայություն մատուցող զբոսաշրջային ընկերությունների գործունեություն:


Սիսիանի տարածաշրջանում առավել հայտնի պատմամշակութային և գրոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող վայրերն են՝



## ԶՈՐԱՑ ՔԱՐԵՐ

Զորաց Քարեր հնագույն մեգալիթյան համալիրը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի մոտակայքում: Այն ունի մի քանի անվանում՝ Զորաց քարեր, Դիք-դիք քարեր: Դեռևս հուրիդրային տարիներին այս հուշարձանի տարածքում արված նախնական պեղումների նյութերի հիման վրա այն թվագրվել էր Ք.ա. 3-1-ին հազարամյակով և եզրակացություն է արվել, որ դա բրոնզեդարյան ժամանակաշրջանի դամբարանադաշտ է:

## ՈՐՈՏԱԲԵՐԴ



Որոտնաբերդ, հայկական ամրոց Մեծ Հայքի Սյունիք նահանգի Ծղուկ գավառում, ներկայում՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Որոտնական գյուղի մոտ, Որոտան գետի աջափնյա լեռնաբազուկի վրա: Գտնվում է Սիսիան քաղաքից 20 կմ արևելք: Եղիշեն (V դ. պատմիչ) Որոտնաբերդը հիշատակում է պարսկական բռնակալներից 450 թվականին Վարդանանց ազատագրած բերդերի ու ավանների

թվում: Ստեփանոս Օրբելյանը (XIIIդ.) Որոտնաբերդը դասել է Սյունիքի նշանավոր բերդերի շարքը, որը 1075-1094 թվականներին պատկանել է Սյունյաց (Կապանի) թագավոր Սենեբեղիմ Ա-ին: 1104 թվականին Որոտնաբերդը գրավել են սելջուկ թուրքերը, 1219 թվականին Իվանե Զաքարյանը ազատագրելով այն հանձնել է Լիպարիտ Օրբելյանին: 1386 թվականին Լենկթեմուրի հորդաները ասպատակելով Սյունիքը, գրավել են նաև Որոտնաբերդը, որտեղ ամրացած Բուրթել և Սմբատ Օրբելյան իշխաններին գերեվարել են Սամաղանդ (որոշ ժամանակ անց նրանք վերադարձել և կրկին տիրել են հայրենի բերդը): 1407 թվականին Սմբատ իշխանից բերդը գրավել է Կարա-Յուսուֆ թեմուրյան բռնակալը: 1724 թվականին ուրացած Մելիք Բաղից Որոտնաբերդը ազատագրել է Դավիթ Բեկը: Որոտնբերդը տեղադրված է Լորածորի գետաբերդանի և Վաղատին գյուղի միջև գտնվող հսկայական ժայռազանգվածի վրա: Գահավեժ, բնական ժայռապարիսպները բերդի երեք կողմերից իջնում են դեպի Որոտանի կիրճը: Բերդի տարածքը կազմող հարթակը հավասարաթուն եռանկյան տեսք ունի, որի հյուսիսային անկյունում վեր է բարձրանում մի խոշոր ժայռազանգված, հարավում, մոտ 50 մետր բարձրության վրա միջնաբերդն է, իսկ հարթակի մյուս կողմերը զառիվայր են, բացի արևմտյան հատվածից:




## Թանգու կամուրջ

Մելիք Թանգու կամուրջ, որը գտնվում է Սիսիանից մոտ 20 կմ արևելք: Ընդգրկված է Որոտանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Կառուցվել է 1855 թվականին Սյունիքի Մելիք Թանգու կողմից Որոտան գետի վրա Որոտնաբերդի փլատակներից ներքև գտնվող կիրճում: Բերդը բազմիցս գրավել և ազատագրվել է 450 թվականի Վարդան Մամիկոնյանի կողմից: 18-րդ դարում ազատագրվել է Մելիք Բաղրուց Դավիթ Բեկի կողմից:



## ՇԱՔԻ ԶՐԿԵԺ



Շաքի ջրվեժը ջրագրական բնության հուշարձան է: Գտնվում է Սիսիանում, Որոտան գետի ձախակողմյան՝ Շաքի վտակի վրա: Զրվեժի տեղանքը իրենից ներկայացնում է խորը կիրճ՝ հարուստ ժայռերով և քարայրներով: Դրանցում հայտնաբերվել են մարդու գործունեության հետքեր, ինչպես նաև մոխիր, որը թվագրվում է պալեոլիթի ժամանակաշրջանին: Շաքիի ջրվեժը գտնվում է Որոտանի կիրճում, Սիսիանից 3կմ դեպի հյուսիս-արևմուտք: Բարձրությունը 18մ է:

## ՊՈՐՏԱՔԱՐ



«Սիսիանից Գորիս տանող խճուղու աջ կողմում, մի քարոտ հրապարակի մեջտեղում դուրս է ցգված պորտանանա քար: Այդ քարի մակերեսը, ինչպես և նրա շուրջը եղած հրապարակը ողորկված են բազմաթիվ հաճախորդների այցելությունից: Ժամանակին, անշուշտ նա ավելի բարձր է եղել, իսկ այժմ միայն այդ *ամբողջական ֆալոսի խղճուկ մնացորդն է պահպանվել*, որի վրա անցյալում չբեր կանայք, պորտով պառկելով, շուտուճուտ են եկել, այն հաստատ հավատով, որ այդ քարի գորությամբ անպատճառ կիղիանան և զավակ կունենան: Պորտի վրա ցցում քարին՝ իրենց *ցավը* դրան ամուր գամելով: Հենց այդ երկարատև արարողությունից քարը մաշվել՝ ողորկվել է»: Ժողովրդի շրջանում հայտնի *պորտաքարը*, որը մինչև այսօր գտնվում է նշված տեղում, գրավոր և բանավոր այլ աղբյուրների համաձայն շարունակել է մնալ հատուկ ծիակատարության առարկա խորհրդային տարիներից մինչև այսօր: Շատերը այն նմանեցնում են գլուխը վեր բարձրացրած գորտի, որը հայկական հնագույն հավատալիքներում խորհրդանշել է պտղաբերություն:

## ԱՂԶՎԱՆԻ ԿԱՄՈՒՐ



Աղզվանի կամուրջը գտնվում է Սիսիանի տարածաշրջանում, Որոտանգետի մոտ, Դարբաս գյուղի տակ: Կառուցվել է 1675 թվականին Հայրապետ վարպետի ձեռքով: Կառուցման մասին կան հայերեն, պարսկերեն արձանագրություններ:

Աղզվանի կամուրջը միակամար գեղեցիկ հորինվածք է: Կամարը շինված է սրբատաշ, իսկ օժանդակ մասերը կոկիածո և բոլորովին անտաշ քարերով: Կամրջի աջ ափը հենված է քարածայռերի վրա, իսկ ձախը ցածր է եղել և բարձրացված է եղել և բարձրացված է եղել արհեստական պատնեշով ու թմբով:

## Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ, ԲՈՒՀ-եր

Համայնքում գործում են 1 ավագ, 16 հիմնական, 18 միջնակարգ և 1 տարրական դպրոցներ, 5 արտադպրոցական հաստատություններ, 7 նախակրթարաններ, ՀԱԱՀ-ի մասնաճյուղ, 1 քոլեջ և 1 մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոն:

Դպրոցներում սովորում է 3290 աշակերտ: Բոլոր դպրոցները միասին ունեն 1021 աշխատատեղ: Համայնքային ենթակայության 5 նախադպրոցական հաստատություններում և գյուղական բնակավայրերում գործող նախակրթարաններում ընդգրկված են 977 երեխաներ: Նախակրթարաններն ու նախադպրոցական հաստատություններն ունեն 226 աշխատատեղ: Համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկները հիմնականում ապահովված են մասնագիտական կադրերով, որոնց շնորհիվ հաջողվել է պահպանել այդ հիմնարկների աշխատանքային ռիթմը: Սիսիանում գործող նախակրթարաններն ապահովված են տիպային շենքերով, ջրով, էլեկտրաէներգիայով, կանոնավոր կատարվում է աղբահանություն: Գյուղական բնակավայրերում գործող նախակրթարաններն ունեն մասնակի վերանորոգման խնդիրներ, Շաքի բնակավայրի նախակրթարանն ունի վերանորոգման անհրաժեշտություն:

Սիսիան համայնքում Համո Սահյանի անվան քաղաքային մշակույթի տունը հիմնանորոգվել է 2010թ. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի աջակցությամբ: Որոշ բնակավայրերում մշակույթի տները գտնվում են անբարեկարգ վիճակում: Գրադարանն ունի 121880 անուն գիրք, 1284 ընթերցող: Համայնքի գրադարանի գրապահոցները անմխիթար վիճակում են, համալրման ենթակա գրքերի ներքին հարդարման աշխատանքների, լուսամուտների և դռների նորոգման և փոփոխման կարիք կա:

Համայնքային ենթակայությամբ գործում է Ֆուտբոլի դպրոց, շախմատի դպրոց: Շախմատի դպրոցում ընդգրկված են 56 սաներ, ովքեր տարբեր մրցաշարերում մրցանակային տեղեր են զբաղեցրել: Դպրոցի շենքը ենթակա է նորոգման: Ֆուտբոլի դպրոցում ընդգրկված են 119 սաներ: 2017 թվականին ՈՒԵՖԱ-ի և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի աջակցությամբ կառուցվեց ֆուտբոլի դպրոցի հանդերձարանը և արհեստական խոտածածկով մարզադաշտը:

Համայնքն ունի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, որտեղ գործում են մի շարք խմբակներ (խոհարար-հրուշակագործի, խոհարար-դիզայների, գեղանկարչության, փայտի գեղարվեստական մշակման, գորելենի, համակարգչային ուսուցման, վարսահարդարների, մատնահարդարների, դիմահարդարների, հելունագործության, ուլունքագործության, դեկորացիաների ձևավորման, ասմունքի) և հաճախում է 220 երեխա, աշխատողների թիվը՝ 32:

Համայնքի երաժշտական դպրոցում գործում են դաշնամուրի, լարային, փողային և ժողգործիքների բաժինները: Դպրոց են հաճախում 156 սան, աշխատակիցների թիվը 32: Համայնքի պարարվեստի դպրոցում սովորում են 58 սան: Դպրոցի շենքը հիմնական նորոգման կարիք ունի, ուսումնական պայմանները բավարար չեն արդյունավետ ուսուցման համար:

2. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոցը հիմնովին նորոգված և ջեռուցված է, սաների թիվը 118 է, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 17:

Գյուղական բնակավայրերում արտադպրոցական կրթություն գրեթե չի իրականացվում:

## Դպրոցական ուսումնական հաստատություններ

Աղյուսակ 8.

| Հ/Հ   | Հաստատության անվանում     | Ըստ նախագծի տեղերի թրվը | Փաստացի սաների թրվը | Աշխատողների թրվը |
|---|---------------------------|-------------------------|---------------------|------------------|
| <b>Դպրոցական ուսումնական հաստատություններ</b> |                           |                         |                     |                  |
| 1   | «Սիսիանի թիվ 1 հ/դ» ՊՈԱԿ  | 800                     | 307                 | 56               |
| 2   | «Սիսիանի թիվ 2 հ/դ» ՊՈԱԿ  | 600                     | 500                 | 61               |
| 3   | «Սիսիանի թիվ 4 հ/դ» ՊՈԱԿ  | 380                     | 478                 | 60               |
| 4   | «Սիսիանի թիվ 5 հ/դ» ՊՈԱԿ  | 500                     | 454                 | 61               |
| 5   | «Բռնակոթի մ/դ» ՊՈԱԿ       | 360                     | 189                 | 36               |
| 6   | «Անգեղակոթի մ/դ» ՊՈԱԿ     | 520                     | 177                 | 42               |
| 7   | «Շաքիի մ/դ» ՊՈԱԿ          | 300                     | 117                 | 36               |
| 8   | «Շաղատի մ/դ » ՊՈԱԿ        | 300                     | 150                 | 37               |
| 9   | «Ույծի մ/դ» ՊՈԱԿ          | 133                     | 69                  | 31               |
| 10  | «Դարբասի մ/դ» ՊՈԱԿ        | 150                     | 75                  | 34               |
| 11  | «Աշոտավանի մ/դ » ՊՈԱԿ     | 120                     | 48                  | 26               |
| 12  | «Գորայքի մ/դ» ՊՈԱԿ        | 240                     | 55                  | 31               |
| 13  | «Ախլաթյանի մ/դ» ՊՈԱԿ      | 131                     | 49                  | 26               |
| 14  | «Վաղատինի մ/դ» ՊՈԱԿ       | 70                      | 51                  | 32               |
| 15  | «Նորավանի մ/դ» ՊՈԱԿ       | 145                     | 64                  | 28               |
| 16  | «Տոլորսի մ/դ» ՊՈԱԿ        | 147                     | 45                  | 23               |
| 17  | «Ծղուկի մ/դ» ՊՈԱԿ         | 120                     | 27                  | 23               |
| 18  | «Սառնակունքի մ/դ» ՊՈԱԿ    | 192                     | 55                  | 33               |
| 19  | «Սպանդարյանի մ/դ» ՊՈԱԿ    | 126                     | 29                  | 31               |
| 20  | «Շամբի մ/դ» ՊՈԱԿ          | 100                     | 47                  | 29               |
| 21  | «Դաստակերտի մ/դ» ՊՈԱԿ     | 180                     | 8                   | 20               |
| 22  | «Սալվարդի հ/դ » ՊՈԱԿ      | 25                      | 14                  | 20               |
| 23  | «Մուցքի հ/դ» ՊՈԱԿ         | 100                     | 7                   | 14               |
| 24  | «Շենթաղի հ/դ» ՊՈԱԿ        | 110                     | 27                  | 20               |
| 25  | «Լորի մ/դ» ՊՈԱԿ           | 150                     | 34                  | 29               |
| 26  | «Աղիտուի հ/դ» ՊՈԱԿ        | 100                     | 41                  | 22               |
| 27  | «Որոտանի հ/դ» ՊՈԱԿ        | 198                     | 26                  | 19               |
| 28  | «Հացավանի մ/դ» ՊՈԱԿ       | 51                      | 30                  | 24               |
| 29  | «Տորունիքի հ/դ » ՊՈԱԿ     | 88                      | 4                   | 11               |
| 30  | «Թասիկի հ/դ» ՊՈԱԿ         | 60                      | 17                  | 23               |
| 31  | «Իշխանասարի հ/դ» ՊՈԱԿ     | 72                      | 62                  | 27               |
| 32  | «Բնունիսի հ/դ» ՊՈԱԿ       | 31                      | 11                  | 15               |
| 33  | «Բալաքի տարր. դպրոց» ՊՈԱԿ | 28                      | 4                   | 10               |
| 34  | «Արևիսի հ/դ » ՊՈԱԿ        | 40                      | 5                   | 11               |
| 35  | «Լծենի հ/դ » ՊՈԱԿ         | 25                      | 6                   | 12               |
| 36  | «Սոֆլու հ/դ» ՊՈԱԿ         | 20                      | 8                   | 18               |
| 37  | «Սիսիանի ավագ դպրոց» ՊՈԱԿ | 800                     | 300                 | 54               |

## Առողջապահական հաստատություններ

Համայնքում կա 1 հիվանդանոց, որը նախատեսված է 50 հիվանդի համար, աշխատողների թիվը կազմում է 156 մարդ և զինվորական հոսպիտալ Աղիտու բնակավայրում, որտեղ աշխատողների թիվը կազմում է 123 մարդ: Գյուղական բնակավայրերում գործում են բուժկետեր, որոնց մի մասը ենթակա են շենքային պայմանների բարելավման: Համայնքում գործում է 12 դեղատներ և 7 ատամնաբուժական կենտրոններ, որտեղ աշխատողների թիվը կազմում է 13 մարդ: Նախատեսվում է կառուցել բժշկական ամբուլատորիա Անգեղակոթ բնակավայրում:

### Աղյուսակ 9. Սիսիան համայնքում գործող առողջապահական հաստատությունները և աշխատակիցների թիվը ըստ բնակավայրերի

| h/h | Համայնք/բնակավայր | Հաստատության անվանումը                          | Աշխատողների թիվը, մարդ |
|-----|-------------------|---|------------------------|
| 1   | Սիսիան            | «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ                  | 1/156                  |
| 2   | Ախլաթյան          | բուժկետ   | 1/1                    |
| 3   | Աղիտու            | բուժկետ, զինվորական հոսպիտալ                    | 1/123                  |
| 4   | Անգեղակոթ         | բուժամբուլատորիա                                | 1/10                   |
| 5   | Աշոտավան          | բուժկետ   | 1/1                    |
| 6   | Արևիս             | բուժկետ   | 1/1                    |
| 7   | Բալաթ             | բուժկետ   | 1/1                    |
| 8   | Բնունիս           | բուժկետ   | 1/1                    |
| 9   | Բոնակոթ           | «Բոնակոթի առողջության առաջնային պահպանման» ՊՈԱԿ | 1/10                   |
| 10  | Գետաթաղ           | բուժկետ   | 1/1                    |
| 11  | Դաստակերտ         | բուժամբուլատորիա                                | 1/1                    |
| 12  | Դարբաս            | «Դարբաս ԱԿ»                                     | 1/6                    |
| 13  | Թանահատ           | -   | -                      |
| 14  | Թասիկ             | բուժամբուլատորիա                                | 1/1                    |
| 15  | Իշխանասար         | բուժկետ   | 1/1                    |
| 16  | Լձեն              | -   | -                      |
| 17  | Լոր               | բուժկետ   | 1/1                    |
| 18  | Հացավան           | բուժամբուլատորիա                                | 1/1                    |
| 19  | Մուցք             | -   | -                      |
| 20  | Նժդեհ             | -   | -                      |
| 21  | Նորավան           | բուժկետ   | 1/1                    |
| 22  | Շաղատ             | բուժամբուլատորիա                                | 1/1                    |
| 23  | Շաքի              | բուժկետ   | 1/1                    |
| 24  | Շենաթաղ           | բուժկետ   | 1/1                    |
| 25  | Որոտնավան         | բուժկետ   | 1/1                    |
| 26  | Ույծ              | բուժկետ   | 1/1                    |
| 27  | Սալվարդ           | բուժկետ   | 1/1                    |
| 28  | Վաղատին           | բուժկետ   | 1/1                    |
| 29  | Տոլորս            | բուժկետ   | 1/1                    |
| 30  | Տորունիք          | բուժկետ   | 1/1                    |
| 31  | Սառնակունք        | բուժկետ   | 1/1                    |

|    |            |         |     |
|----|------------|---------|-----|
| 32 | Սպանդարյան | բուժկետ | 1/1 |
| 33 | Ծղուկ      | բուժկետ | 1/1 |
| 34 | Գորայր     | բուժկետ | 1/3 |

### Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

Ըստ ՍԱՏԳ-ի տրամադրված տվյալների 2022 թվականի դրությամբ Սիսիանի համայնքում ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված են 766 ընտանիք, նպաստ ստացողների թիվը՝ 563: Գրանցված հաշմանդամների թիվը՝ 3500 անձ:

### Զբաղվածության մակարդակը (քաղաքային համայնքներում):

Ըստ Սիսիանի զբաղվածության կենտրոնի կողմից տրամադրված տվյալների 2022 թվականի դրությամբ գրանցված գործազուրկների թիվը կազմում է 490 մարդ, որից կանայք՝ 335, տղամարդիկ՝ 155: Զբաղվածների թիվը կազմում է 3368 մարդ:

### 2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

| Հ/Հ | Իրականացվող ծրագրի անվանումը   |
|-----|--|
| 1.  | Շաղատի 2.5 կմ ոռոգման համակարգի կապիտալ վերանորոգում                           |
| 2.  | Կենտրոնական փողոցների մայրերի հիմնանորոգում                                    |
| 3.  | Բնակավայրերում կենտրոնական փողոցների ասֆալտապատում                             |
| 4.  | Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, դռների և լուսամուտների փոխարինում |
| 5.  | Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում                                   |

### 2.4. Համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսումները

| h/h | Եկամտատեսակ                     | 2023          | 2024        | 2025        | 2026        | 2027        | 2028        |
|-----|---------------------------------|---------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
|     |                                 | փաստ.         | նախ.        | կանխ.       | կանխ.       | կանխ.       | կանխ.       |
| 1   | ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՆԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ | 125.289.925   | 131.554.421 | 138.132.142 | 145.038.749 | 149.389.911 | 153.871.609 |
| 2   | ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ    | 133.593.084   | 142.815.949 | 152.813.066 | 163.509.980 | 174.955.679 | 187.202.577 |
| 3   | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ                 | 16.226.880    | 16.780.220  | 17.300.450  | 17.780.192  | 18.250.590  | 18.650.970  |
| 4   | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ                 | 4.000.000     | 5.700.000   | 6.500.000   | 6.500.000   | 6.500.000   | 6.500.000   |
| 5   | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԱՆՆՈՐՇԼԵՐ        | 1.153.486.600 | 1.708.231.3 | 1.708.231.3 | 1.708.231.3 | 1.708.231.3 | 1.708.231.3 |

|   |   |                      |                      |                      |                      |                           |                      |
|---|---|----------------------|----------------------|----------------------|----------------------|---------------------------|----------------------|
| 6 | ԳՈՒՅՔԻ<br>ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹ<br>ՅՈՒՆԻՑ<br>ԵՎԱՄՈՒՏՆԵՐ | 189.965.480          | 195.160.444          | 195.160.444          | 195.160.444          | 195.160.444               | 195.160.444          |
| 7 | ԱՅԼ<br>ԵՎԱՄՈՒՏՆԵՐ                             | 3.000.000            | 4.000.000            | 4.000.000            | 4.000.000            | 4.000.000                 | 4.000.000            |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                               | <b>1.625.561.969</b> | <b>2.204.242.334</b> | <b>2.222.137.402</b> | <b>2.240.220.665</b> | <b>2.256.487.9<br/>24</b> | <b>2.273.616.900</b> |

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Միսիան համայնքի կայուն զարգացման առջև ներկայումս ծառայած խոչընդոտներն ու դժվարություններն են՝ ըստ հետևյալ ուղղությունների.

- 1) **Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանումը** – ներդրողների համար ոչ գրավիչ միջավայրը, սպառման շուկաների անհասանելիությունը, ներդրումային դաշտի ապահովմանն ուղղված ենթակառուցվածքների ստեղծման և ուղղորդված քաղաքականության բացակայություն:
- 2) **Համայնքի գույքի կառավարումը** – գյուղ. նշանակության հողերի մասնատվածությունը, գյուղատնտեսական խոշոր միավորումների ստեղծման և որակյալ գյուղմթերքի արտադրության անհնարինությունը:
- 3) **Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը** – առկա նախակրթարանների ծանրաբեռնվածություն, նոր նախակրթարանի կառուցման անհրաժեշտություն, նախկինում կրթական, մշակութային հաստատությունների շինությունների սեփականաշնորհում, գույքի ձեռք բերում, դաստիարակների վերապատրաստում:
- 4) **Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** – ֆինանսական միջոցների սղությունը:
- 5) **Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը** – ֆինանսական միջոցների սղությունը, աշխատատեղերի բացակայությունը, բնակչության իրազեկվածությունը: Կայուն եկամուտների, մշտական աշխատատեղերի բացակայությունը, խոշոր համայնքահեն ձեռնարկությունների փակվելը, արտաքին խոշոր ներդրումների, արտահանման բացակայությունը: Բնակչության ցածր կրթական ցենզը, նոր մասնագիտությունների յուրացման անկարողությունը: Գյուղատնտեսական արտադրանքի ցածր գները և բարձր ինքնարժեքը:
- 6) **Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը** – համայնքում խաղահրապարակների և մարզագույքի՝ մարզիչների պակասը:
- 7) **Համայնքում բնակարանային շինարարության խթանումը** – բնակչության ցածր եկամուտների պատճառով նոր բնակելի շենքերի, առանձնատների, բազմաբնակարան շենքերի կառուցապատման կտրուկ անկում, երբեմն զրոյական մակարդակի: Հին բնակֆոնդի ավելցուկ:
- 8) **Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը** – Համայնքապատկան համապատասխան առանձնացված-մասնագիտացված կառույցի բացակայությունը, ֆինանսական միջոցների սղությունը:
- 9) **Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը** – Համապատասխան հիմնարկ-ձեռնարկության բացակայություն, ֆինանսական միջոցների սղությունը:
- 10) **Պետության պաշտպանության իրականացման աջակցումը** – արտագաղթը, ոչ բավարար նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսները, մոբիլիզացիոն ուժերի համակարգվածության բացերը:
- 11) **Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը** – բնակչության իրազեկվածությունը, կահավորված, վերազինված ապաստանանների

բացակայությունը, պատկան մարմինների կողմից ուսումնավարժական հավաքների և ուսումնական տազնապների կազմակերպման դժվարությունները:

- 12) **Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը** – մասնատված հողակտորները, ոռոգման ցանցի բացակայությունը, ագրոմելիորատիվ, հողավերականգնման համալիր-համակարգված միջոցառումների տեսլականի բացակայությունը: Հատվածական, թիրախային գյուղ. նշանակության միջոցառումները՝ չընդգրկելով պարփակող գյուղատնտեսական աշխատանքները:
- 13) **Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը** – գետի մաքրման համար ֆինանսական միջոցների սղությունը: Աղտոտված տարածքների ինքնաբուխ աղբավայրերի մաքրման կոնսերվացման աշխատանքների դժվարությունները կանաչապատման և անտառվերականգնման աշխատանքների կազմակերպման բազամաշերտ խոչընդոտները:
- 14) **Զբոսաշրջության զարգացման խթանումը** – զբոսաշրջային ենթակառուցվածքների բացակայությունը, սպասարկման ծառայությունների միջև առողջ մրցակցային մթնոլորտի և համագործակության բացակայությունը: Զբոսաշրջային ծառայությունների և հարակից սպասարկող ոլորտների միասնական հայեցակարգի չձևավորումը: Միջազգային չափանիշներին և շուկաների չինտեգրվելը:
- 15) **Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում** – Համապատասխան քաղաքականության բացակայությունը երիտասարդներին ինտեգրելու, ներգրավելու համայնքի զարգացման, կայացման, մասնակցային կառավարման գործին:
- 16) **Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը** – բնակարանային պայմանները, սոցիալական վատ վիճակը, գործազրկությունը, կայուն եկամուտների, երեխաների համար համապատասխան կրթական-դաստիարակչական, մարզական, մշակութային հաստատությունների բացակայությունը:
- 17) **Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը** – արդի բժշկական սարքավորումների պակասը, խոր մասնագիտացված անձնակազմի պակասը, նոր բժշկական կենտրոնի անավարտությունը:
- 18) **Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը** – հաշմանդամների համար ոչ հարմար միջավայր, կարծրատիպեր, տնտեսական, սոցիալական կյանքին ինտեգրման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով խոչընդոտները, չհամակարգված ինտեգրման քաղաքականության բացակայությունը, ընտրովի միջոցառումները:
- 19) **Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը** – բնակչության ոչ իրազեկվածությունը, հավատալիքային և կարծրատիպային մտածելակերպը:
- 20) **Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով** – Գործարարների և շահագրգիռ անձանց (իրավաբանական և ֆիզիկական) հետաքրքրությունների բացակայությունը, կարճաժամկետ և աննպատակային գործողությունները:

**2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն**

| Ուժեղ կողմեր  | Թույլ կողմեր   |
|---|--|
| <ul style="list-style-type: none"> <li>▪ Բարենպաստ հողակլիմայական պայմաններ:</li> <li>▪ Էկոլոգիական վտանգ ներկայացնող խոշոր ձեռնարկությունների բացակայություն և համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքների էկոլոգիապես մաքուր որակ:</li> <li>▪ Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր, ալպիական արոտավայրեր՝ գյուղատնտեսության, անասնապահության, վայրի հավաքի, սննդի վերամշակման և արտադրության զարգացման համար:</li> <li>▪ Կրթական, մշակութային, առողջապահական հաստատությունների և կադրերի առկայություն:</li> <li>▪ Առկա ինժեներական լաբորատորիաներ:</li> <li>▪ Անխափան գործող ֆիքսված հեռախոսակապ, բջջային հեռախոսակապ՝ «Վիվասել-ՄՏՍ», «Յուրոմ» և «Բիլայն» շարժական կապի և ինտերնետ ծառայություններ:</li> <li>▪ 10 հեռուստաալիքների և կաբելային հեռուստատեսության հեռարձակում:</li> <li>▪ Զբոսաշրջության ոլորտի կայացման շարունակական զարգացման և տարատեսակ ծառայությունների մատուցման նախադրյալներ. տարատեսակ, բազմաբովանդակ, գրավիչ պատմամշակութային հարուստ ժառանգություն, բնության հուշարձաններ, տեսարժան վայրեր, գեղատեսիլ բնություն:</li> <li>▪ Տարածաշրջանում առկա ամենաշատ ջրային ռեսուրսներ</li> <li>▪ Բնակչության բարյացկամություն և օտարերկրյա ներդրումների ողջունում:</li> <li>▪ Անվտանգային համընդհանուր միջավայր:</li> <li>▪ Տարածքային առավելություններ այլ համայնքների հետ համեմատած:</li> <li>▪ Սեփական ռեսուրսների բավարարություն:</li> <li>▪ Տարբեր գոտիականության առկայություն:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>▪ Տարածքային մեծություն , բնակավայրերի հեռավորություն միմյանցից և կլիմայական տարբերություններ, տարածքային կտրտվածություն:</li> <li>▪ Բնակավայրերի գերակշռող հատվածներում անբարեկարգ, չկահավորված, չխնամված փողոցներ և մայրեր:</li> <li>▪ Դաշտամիջյան և մոտեցնող ճանապարհների անմխիթար վիճակ:</li> <li>▪ Վթարային, քայքայվող բնակֆոնդի առկայությունը:</li> <li>▪ Անբարեկարգ, հիմնանորոգման կարիք ունեցող ոռոգման ցանցերը:</li> <li>▪ Սակավաթիվ կանաչապատ տարածքներ:</li> <li>▪ Բնակչության նվազման պատճառով տնտեսական կայուն զարգացման անհնարինությունը:</li> <li>▪ Սոցիալապես անապահով, միայնակ թոշակառուների, ցածր եկամուտ ունեցողների և սոցիալապես-տնտեսապես ինգեգրման անհնարինությամբ ընտանիքների հարաբերական մեծ թիվը համայնքում:</li> <li>▪ Գործազրկության բարձր և բնակչության ցածր եկամտային ցուցանիշը:</li> <li>▪ Տուրիստական կենտրոնի անարդյունավետ գործունեությունը:</li> <li>▪ Համայնքում տուրիզմի զարգացմանը նպաստող ենթակառուցների, միասնական տեսլականի, մոտեցումների, համագործակցության բացակայությունը շահագրգիռ տնտեսվարողների շրջանում:</li> <li>▪ Գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը, մաշվածությունը, քայքայումը, վերացումը:</li> <li>▪ Մաշված գյուղատնտեսական տեխնիկական, ամբողջական գյուղտեխնիկայի համակազմի բացակայությունը, համապարփակ գյուղատնտեսական աշխատանքների կատարման անհնարինությունը աշխատանքային սեզոնին:</li> <li>▪ Ֆինանսական հոսքերի, ներդրումների, նոր աշխատատեղերի բացման, գործող ձեռնարկությունների նոր արտադրանքի բացակայությունը:</li> <li>▪ Համայնքների եկամուտների, բյուջեի, միջոցների սահմանափակվածությունը:</li> <li>▪ Աշխատանքների սեզոնայնությունը:</li> </ul> |



|   |   |
|---|---|
|   | <ul style="list-style-type: none"> <li>▪ Գյուղտեխնիկայի, անասնազվաքանակի, վարելահողերի կրճատումը, արոտների դեգրադացիան, ոչ մրցունակ գյուղարտադրանքը արտաքին և ներքին իրացման շուկաներում, վերամշակման անհասանելիություն:</li> </ul>   |
| <b>Հնարավորություններ</b>   | <b>Սպառնալիքներ (վտանգներ)</b>  |
